



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

## Հ Ր Ա Մ Ա Ն

09 նոյեմբերի 2020 թվականի N 397-Ա

**ԹԱՄԱՐ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 97-3.1-Ղ4-1) ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասով, 17-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1554-Ն որոշմամբ հաստատված կարգի 151-րդ կետով, Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 441-Ն որոշմամբ հաստատված կարգով և հիմք ընդունելով Սյունիքի մարզպետարանի իրավաբանական բաժնի պետի (ծածկագիր՝ 97-3.1-Ղ4-1) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հարցազրույց անցկացնող հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 5-ի եզրակացությունը և Թ.Ստեփանյանի դիմումը՝

### հ Ր ա մ ա յ ու մ եմ.

1. 2020 թվականի նոյեմբերի 10-ից Թամար Ստեփանյանին նշանակել Սյունիքի մարզպետարանի իրավաբանական բաժնի պետի (ծածկագիր՝ 97-3.1-Ղ4-1) պաշտոնում՝ 12 ամիս փորձաշրջանով:
2. Թամար Ստեփանյանի փորձաշրջանի համակարգող նշանակել մարզպետարանի անձնակազմի կառավարմանի բաժնի պետ (ծածկագիր՝ 97-3.5-Ղ4-1) Անահիտ Հովհաննիսյանին:
3. Աշխատավարձը՝ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և չափով:

11/9/2020

X

**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**  
2020թ.նոյեմբերի 09  
ք. Կապան



Ստեփանյան Էդգար 4003840615

**Է. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**